3379

281
Q-79
1918

№ 2438

# ԱՐԵՏՈՒՄՆ

Մեռելներին Յարութիւն տուող Աստծուց՝ ուրախալի ամբողջ մարդկութեան համար,

ԿԱՄ

Աստուածային կենարար

ԼՈՅՍԸ

Այս աշխարհի խաւարում

281
Կ-79

Ազգային ատենապետութեան գրասենեակ
Լ. Գուսանի տպարան
ԹԻՖԼԻՍ
1918 թ.

Բ 2007

11641

2010

281
200
Ա3-Ա4
281
Ա-79
2198
200
Ա13-Ա4

# ԱՒԵՏՈՒՄՆ

## ՄԵՌԵԼՆԵՐԻՆ*) ՅԱՐՈՒԹԻՒՆՏԸ-ՒՈՂ ԱՍՏԾՈՒՑ՝ ՈՒՐԱԽԱԼԻ ԱՄԲՈՂՋ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ,

ԿԱՄ

## ԱՍՏՒԱԾԱՅԻՆ ԿԵՆԱՑՔԱՐ

ԷՈՅՍ

## ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՒԱՐՈՒՄ

1004
19085

*) Գործք, 26—8։ 1 Կոր. 15—29, 32, 16, 17։ 2 Կոր. 1—9։ Հռովմ. 4—17։ Յովհան. 8—51։ Մատ. 27—52։ 5 Մ. 32—39։ 33—3։ Զաք. 14—5։ Սաղ. 67. (68)—21։ Գ. Ե. 1—18։ 2—10, 11։ 7—9, 15։ 14—1...4։ 9—11...21։

Գ. Ե. նշանակում է՝ Գիրք Երկնից, որը Յարութիւն ուղղեց Աստուածն ուղարկեց Իր Հրեշտակի հետ, որպէսզի ցոյց տայ Իր ծառաներին, թէ ինչ կը կատարուի երկրի վրայ, 3000 տարուայ ընթացքում, և ինչով կը վերջանայ, 6 և 7

հապար տարուց յետոյ, Նրա կռիւը Նրան վաղեմի հակառակորդ Սատանայի և այն մարդկանց դէմ, որոնց Սատանան ներշնչել է հակառակել և չը կատարել Երկնային Գրքի միջի Աստուածային հրամանները։

Գ. Ե, յունարէն՝ „Ապօկալիպսիս,“

1886 թ.

Բնաբան։

Այսպէս է ասում Իսրայէլացիների1) թագաւորը և նրանց2) Մեսիան. «Արևելքից3) եկողին4) Ես կ'առաջացնեմ հիւսիսում,5) և Նա կը յայտարարի Բոլոր ազգերին Իմ Անունը և համամարդկային ճշմարտութիւնը,6) բայց կը յայ-

1) Ես. 44—6։ 48—11 (12)։ 1 Սամ. (թագ.) 8—7, 8։ 12—17, 19։ 2 Մ. 15—18։ Զաք. 9—9 և III։

2) Ովս. 13—4։ Այս Մեսիան փրկեց (կամ պըրծացրեց) Իսրայէլացիներին Սատանայից դեռ ևս 700 տ. Ք. Ծ. առաջ (3 (4) Եզրասի 13—40...47)։ Իսկ Յուդայեաններին Նա չի կարող պրծացնել Սատանայից և մինչև օրս։ Գ. Ե. 2—9։ 3—9։

3) Ուրալից Կապոյտ սարից։ Դան. 2—34։

4) Դէպի հիւսիս։

5) Սոլովեցկի կղզու վրայ հաւատաբննական բանտում։

6) Այսինքն՝ հաւատի Միութիւն ամբողջ աշխարհի համար։



տարարի այնպէս,1) որ ոչ Նրա հրապարակական քարոզը և մինչև անգամ ոչ էլ Նրա միջոցով փողոցում կոտրած ճիպոտի ճայթիւնը ոչ ոք չի լսի։2) Եւ այս իսկ Մարդուն Ես դարձրի Լոյս Բոլոր ազգերի համար և Յուդայեանների միացնողը Նրանց հետ։ Ես. 41—25։ 42—6...1։

Եւ այս պատճառով.

Այս Սատանայական Աշխարհի խաւարից ելք փնտրող, կարդա այս Աստուածային Գրքոյկը Մեծ Երկիւղածութեամբ և կտորներ նայելով ըստ բնագրի կամ Հրէական, կամ Գերմանական Աստուածաշնչի, և ստուգելով փորձով և համաշխարհային պատմութեան համաձայն։

I.

Աստուածային նախազուշակութիւնը։

«Ահա խաւարը կը ծածկի ամբողջ երկիրը և կը խաւարեն բոլոր ազգերը,3) իսկ քեզ վրայ,

1) Զարմանալի կերպով։

2) Նշանակում է՝ կը յայտարարի այս Համամարդկային Կրօնը ոչ թէ բանաւոր, այլ գրաւոր, և հետևապէս տանձարում սեղաններ էլ չի կոտրատի, առևտրականներին պարանով չի ծեծի, Գենեսարէթցիների 2000 խոզերը չի ոչնչացնի, և ժողովրդական բազմութիւնները նրա յետևից չեն գնայ։

3) Եւ առանձնապէս Քրիստոնեաները, Սատանայի ձեռքով նրանց անջատելով 666 ճշմարիտ հաւատների կամ ցանկապատերի։

Երուսաղէմ, կ'երևայ יהוה: 1) և Նրա փառքը կը փայլի քեզ վրայ, և հեթանոսները2) կը սկսեն մտնել քո լոյսի մէջ և նրանց թագաւորները քո ճաճանչափայլ փայլի մէջ,3) և այն ժամանակ արևելքից մինչև արևմուտք փառաբանւած կը լինի Իմ Անունը և հեթանոսներով, և ամեն մի տեղ նրանք կը սկսեն երկրպագել, ինկնարկել և անարատ զոհեր մատուցանել Իմ Անունը, որովհետև Իմ Եհովա Անունը պատուտոր կը լինեն օրհնելու և Բոլոր հեթանոսները,4) և Իմ Տաճարը (Նոր Սիօնի սարի վրայ) կը լինի Աղօթքի Տաճար արդէն բոլոր ազգերի5) համար և այն

1) Եհովան՝ Այս նախայաւէտ զարմանալի Անունը Յարութիւն տուող Աստծուն յայտնւել է առաջին անգամ միայն Մովսէսի միջոցով: 2 Մ. 6—1...3: 15—3: Ովս. 12—6: իսկ այժմ միայն Ինձ: Գ. Ե. 22—6: Ես. 41—25: 42—6...1:

2) Այսինքն՝ և ոչ հրէաները:

3) Ես. 60—2, 3...20:

4) Իսկ ովքեր կը հակառակեն, նրանց մօտ անձրև չի լինի, և կը սկսեն փտել նրանց աչքերն ու լեզուները: Զաք. 14—12, 17, 18:

5) Մաղ. 1—11: Ես. 56—7: 2—2, 3: Զաք. 14—16...21: Եզ. 40-ից մինչև 48-ը: Մար. 11—17: Գ. Ե. 1—1, 2: 15—4: Եփ. 4—13: Հռովմ. 11—26...29:



ժամանակ Իսրայէլը կը լինի Ինքը երրորդը, որովհետև նրան կը միանան երկու ազգ՝ իսմայէլացիներն1) ու հայերը2) և այն ժամանակ բոլոր ազգերը կը դարձնեն նրանց (դժոխային) զէնքից երկրագործական պարագաներ, և չի վեր կենայ պատերազմով ոչ մի ազգ ուրիշ ազգի վրայ, և զինուորական ուսում չի լինի 1000 տարով:3)

## II.

Հանգանակ, կամ բացատրութիւն Ե. Գ.-ից նրա Աստուածային Նախազգուշակութեան:

Երկու համազօր Աստուածատարդ կայ մեր Արեգակնային Համակարգութեան մէջ՝ Հրէայ-Եհովան և Հեթանոս-Սատանան: Եհովան Անմահների Աստուածն է, իսկ Սատանան մահկանացու մարդկանց Աստուածն է: 6000 տարի4) անցնելուց յետոյ՝ Եհովան կը յաղթի Սատանային, կը կապկպի նրան շղթաներով և կը նետի խոր Վէրի մէջ (Ա...ում), սովամահ կ'անի և կը դրոշմի նրան

1) Այսինքն՝ Աբրահամի որդի Իսմայէլի սերունդները:

2) Այսինքն՝ Աբրահամի ազգակիցները:

3) Ես. 2—3, 4: 11—6...9: Միք. 4—3: Գ. Ե. 20—4 և III:

4) Հրէական հաշուով:

այնտեղ.1) կը հաստատի Խաղաղութիւն, Ազատութիւն2) և բարօրութիւն բոլոր Ազգերի համար 1000 տարով՝3) համաշխարհային Վարչութեան ներքոյ Երուսաղէմական հասարակապետութեան մէջ, 1000 տարուց յետոյ Եհովան բոլորովին կը ոչնչացնի Սատանային գոյութիւնից՝ նրան պատկանող բոլոր մարդկանց հետ, կը շինի նոր աշխարհ՝ միլիոն անգամ աւելի մեծ սրանից և առանց ովկիանոսի ու ծովերի և կը բնակւի նրա վրայ իր անմահ մարդկանց հետ՝ 280,000տարով։ Սրանից յետոյ էլ Նա կրկին կը շինի Նոր Աշխարհ՝ առաւել ևս լաւ նրանց կեանքի համար, և այլն։ Նա կը սկսի ժամանակ առ ժամանակ, վերաշինել Աշխարհը՝ շարունակ աւելի լաւ և աւելի լաւ, մինչ անվերջ, մաքին-անհասանելի կատարելութեան և ապրել նրա

1) Գ. Ե. 20։

2) Եւ մինչև անգամ սահմաններ չեն լինի։

3) Խաղաղութեան և միակրօնութեան 1000 տարուց յետոյ՝ Սատանան դուրս կը պրծնի Վհից և կը հնարի 111 տարով կրկին նրա դանդան, հշմարիտ կրօնները՝ հանդերձ Ամենահեղ, Արքայութեան մէջ քշած էլեքտրական թնդանօթներով և ամենահրաշագործ-մարգամարտ-մեղսաքաւ քահանաներով, կաթոլիկ քահանաներով, պատուօրներով, մարգարէներով և մի որևէ Աշխարհի քաւիչներով, կամ միջնորդներով և միջնորդուհիներով։



վրայ անվերջ անմահ մարդկանց հետ միասին։ Գ. Ե. 3—21։ Երուսաղէմ քաղաքը, այլակերպուած երկրի վրայ, Կիլնի երկնքից՝ Շինուած երկնային մարդկանցով (այսինքն՝ ուրիշ ժողովրակների վրայի բնակիչներով), և զարդարուած թանկագին քարերով, իսկ փողոցները սալայատակուած են թափանցիկ ոսկով, երկարութեամբ, լայնութեամբ և բարձրութեամբ 2000-ական վերստ, շրջապատուած Յասպիսից շինուած վիթխարի պատով, 12 մարգարիտներից շինուած 12 դարբասներով և նրանց վրայ Իսրայէլի1) 12 ցեղերի անունների փորագրութիւններով, իսկ Էնդօմէզիտների վրայ (կողքի շինութիւնների) Իսրայէլական-իսկ 12 Առաքեալների անունները։ Քաղաքի մէջտեղում կը լինի Եհովայի պալատը, իսկ Տաճար և ոչ մի զոհաբերութիւններ արդէն չեն լինի։ Պալատի տակից կը հոսի Գետ դէպի բոլոր փողոցները, և նրա ափերին կ'աճեն զարմանալի, պտղատու, ամեն ամիս նոր պտուղներ բերող ծառեր, այս մրգերի ուտելուց՝ մարդիկ չեն սկսի ոչ ծերանալ և ոչ մեռնել, այլ ողջ

1) Բայց միայն Դանի փոխարէն՝ Մանասէ. լսում էք արդեօք, 666-ական կամ Սատանայական Քրիստոնեաներ, Եհովայի մշտնջենական դաշն Իսրայէլացիների հետ, այլ ոչ թէ ձեզ հետ։ Եր։ 31—31...40։ 32—37...40...42։ 30—9, 22։ Ովս. 3—4, 5։ Ես. 60, I և III.

անվերջ յաւիտենականութեան մէջ կը մնան անմահ՝ ողամարդիկ 34 տարեկան հասակում, իսկ կանայք՝ 16 տարեկան։ Երուսաղէմից դուրս կը լինեն 24 թագաւորութիւն աջակողմեան ազգերից, Մահից փրկուածներից։1) Եւ այս արտաքաղաքի բնակիչների մօտ, թէև մահ նոյնպէս չի լինի, բայց հիւանդութիւններ դեռ կը պատահեն. և նրանցից բժշկելու համար՝ նրանք հարկադրուած կը լինեն խնդրելու քաղաքացիներից նրանց կենարար ծառերից տերևներ։ Գ. Ե. 21 և 22։

Ահա թէ ինչպիսի Երուսաղէմ2) քաղաքն է հրաւիրում Եհովան անվերջ բնակութեան համար իւրաքանչիւր մարդու, կամ ահա թէ ինչպիսի նպատակ կայ իւրաքանչիւր մարդու՝ հրաժարուել Սատանայից և յարել Եհովային։

Ով որ չի հաւատայ Եհովայի այս խօսքերին, այլ կը հաւատայ Սատանային, որ իբր թէ „Եհովան չի դարձնում իր ծառաներին մարմնապէս անմահ, այլ միայն նրանց հոգիները անկում է մի որևէ Բոզիում, և որ նա երբէք չի նախադուշակել Նրա Բարերար Թագաւորութեան մա-

1) Մատ. 25—33, 46։

2) Այս քաղաքը դեռ Աբրահամը Երկնքից էր ըսպասում։ Եբր. 11—10։



սին Իսրայէլի մէջ 1000 տարով և Երկնից Երուսաղէմի մասին։“ Նա թող չը հաւատայ Եհովային, այլ թող հաւատայ միայն Սատանային. և և այս պատճառով էլ հեռու մի կարդա այս գրքոյկը, այլ պատրաստուիր հնոցի մէջ ընկնելու հոգով և մարմնով. Նաու. 1—2։ Գ. Ե. 22—15։ 21—8։ 20—15, 14։

III.

Անհերքելի ապացոյցը որ Ցիոնում Քրիստոսի անուան տակ խաչից ինքը Եհովան, եւ որ նա շուտով կը ստեղծի այնպիսի նոր Իսրայէլացիների, որոնք արդէն չեն սկսի հեռանալ Նրանից դէպի Սատանան Գ. Ե. 13—8։1)

Վերջին (կամ Արմակեդոնական) օրում2) Ես կը վճռեմ ոչնչացնել բոլոր այն Հեթանոսներին, որոնք կը յարձակուեն այն ժամանակ Երուսաղէմի վրայ, իսկ Դաւթի սերունդների և Բոլոր (այն ժամանակուայ) Երուսաղէմի բնակիչների մէջ Ես կը թափեմ բարեպաշտութեան և գթաշարժութեան3) ոգին. և այս պատճառով, հէնց որ նրանք կը տեսնեն (ինձ (אלי) mich

1) Եհովայի անուան տակ։

2) Գ. Ե. 16—16։ 19—1...21։ Եզ. 38—17, 18։ 39—8։ Զաք. 14—5։

3) Այսինքն՝ նրանց ամենաուժեղ սէրը դէպի նրան տես. III 6. վերջը։

moi), որ Ես-իսկ խոցված էի նրանցից, այն ժամանակ կը հեկեկան և կը տխրեն, և կը սահմանեն նրանց երկրում1) այնպիսի-իսկ սուգ, որպիսին կար նրանցում Գադադ-Ռիմմոնի օրով, Մագեդդէյական հովտում,2) և այս սուգը կը լինի նրանցում առանձին նրանց իւրաքանչիւր ցեղի մէջ, Դաւթի ցեղն առանձին, և նրանց կանայք առանձին։ Նաթանի ցեղն առանձին և նրանց կանայք առանձին։ Ղևիի ցեղն...հայլն, համաձայն Նրանց ցեղերի (Իսրայէլական)3) և կը սկսեն խոստովանուել, ասելով. „Նա թեաց մեզ չնչին և անարժան այն պատճառով,—որ Նա ունէր մարդկային-իսկ ցաւեր և տկարութիւններ, և միայն այս պատճառով մենք բոլորս թէ ատեցինք և թէ մերժեցինք Նրան մեզանից, ինչպէս ամենանանպիտան մարդու,4) բայց թէպէտ և ճշմարիտ է այն, որ Նա պատեց Իրան մեր-իսկ մարդկային, հիւանդոտ և տկար մարմնով, սակայն երբ Նա տարուում էր չարչարանքի և ըստանութեան, այն ժամանակ չը բացեց իր շրթունքները, այլ գնում էր այնպէս հանգիստ, ինչպէս մորթուելու տարուող Գառը, կամ այնպէս հանդարտ, ինչպէս ոչխարն իր խուզողի առաջ։“ Ես. 53—3, 4, 7։

Բացի խաչելութիւնից կատարուեց և այն, որ Նա, ինչպէս Յուդայի1) թագաւոր, մտաւ Երուսաղէմ էշի վրայ նստած, մատնուեց 30 արծաթով2) առաջացաւ Բեթղեհէմից,3) շրջեց Երուսաղէմում,4) և իսկապէս եկաւ երկրորդ Տաճարը5) և Մահմեդ մարգարէին ասաց այսպէս «Ով Մահմեդ, Դու կը տեսնես Ինձ (Եհովային) Քո6) Աստծուն Իմ ծննդեան և մահուան օրը։7)

Եւ Ես տալիս եմ օրէնք Քո8) ժողովրդին Աբրահամական-իսկ, բայց միայն փոխարինելով շաբաթն ուրբաթով, որպէսզի հրէաները չը յարեն այս օրէնքին։»9) Երեմիա մարգարէի-իսկ

1) Այսինքն՝ Գաղեստինում։

2) 2 Ժամ. (Մնաց.) 35—22։

3) Զաք. 12—9...14։ Գ. Ե. 1—18։ 22—6, 16։

4) Այսինքն՝ ինչպէս բիծի (ապօրինի ծնուածի,) հերիտիկոսի, իշխանութիւններին և հարուստներին չը հնազանդուողի։ Ղուկ. 23—3, 8, 14։ Գործ. 24—14, 22.



1) Տես. Բնարան—1։

2) Զաք։ 9—9։ 11—12։

3) Միք. 5—1 (2)։

4) Տես. Իմ ոտերի հետքերը։ Ես. 60—1, 3։

5) Տես. Ճանապարհ Ինձ։ Մաղ. 3—1։

6) Լսում էք արդեօք, Մահմեդականներ, ով է Մահմեդի կամ Ձեր Աստուածը։

7) Ըստ Եբրայական մարտի 14-ին։

8) Այսինքն նրանով օրհնուած Իսմայէլացիներին։ Տես. XIII։

9) Տես. Այս մասին Ղուրանի մէջ։

բերանով՝ ասում է այսպէս.

Յանկարծ կը գայ այնպիսի ժամանակ,1) որ Եհովան կը միանայ հրէաներից2) Նրան յարածների հետ արդէն ողջ անվերջ Յաւիտենականութեամբ, և այնուհետև Նա կը սկսի արդէն Բարերարել նրանց, և կը ներփակի նրանց Սրտերում արդէն այնպիսի հաւատարմութիւն և անձնուիրութիւն դէպի Նա, որ նրանք արդէն չեն սկսի այլևս հեռանալ Նրանից (դէպի Սատանան,) և միայն այնուհետև Նա կը լինի նրանց3) Աստուածը, իսկ նրանք կը լինեն Նրա4) ժողովուրդը, և այն ժամանակ նրանք արդէն չեն սկսի խօսել միմեանց մէջ. «ինչպէս իմանալ արդեօք՝ ով է Եհովան,» բայց Նրանք կը ճանաչեն Նրան

1) Այսինքն՝, երբ Նա կը կապկի Սատանային չղթաներով։

2) Այլ ոչ Դաթանովցիների հետ, ոչ Աբիրօնովցիների հետ և ոչ Նրան հակառակողների հետ (Եզ. 20—38, Նաու. 1—2)։ Իսկ Երուսաղէմ կերպարանափոխուած երկրում, Նա ներս չի թողնի ոչ մի արատաւորի և թալմուդական ու Քրիստոնէական կամ պատնէշական ստութեան նուիրուածի, այլ միայն Նրա մօտ կեանքի-Գրքում գրուածներին։ Գ. Ե. 21—8, 27։ 22—21, 15։ Ես. 65—4, 5։ 66—17։ Սաղ. 68 (69)—29։

3) Այլ ոչ թէ բոլոր մարդկանց։

4) Լսում էք արդեօք, բոլոր և ամեն տեսակ հեթանոսներ։



արդէն ամենքը փոքրից մինչև մեծը, և կը բնակեցնի նրանց իսրայէլացոց երկրում արդէն առանց արտաքսման։1)

IV. Եւ այսպէս.

Բոլոր 666 Քրիստոնէական, 333 Հուդայական, 10 Յուդայական և 6 Մահմեդական կրօնքներից որ կրօնի համար արդեօք, ահեղ դատաստանին, Խաչած Եհովան կը կանգնեցնի մարդկանց աջ կողմը, և յետոյ կը վերցնի նրանց այս երկնային Երուսաղէմի մէջ անվերջ ապրելու համար. իսկ եթէ որ կրօնի համար չէ այսպիսի պարգևը Եհովայից, այն ժամանակ դուրս կը գայ, որ բոլոր կրօնքներն անօգուտ են և հնարած են միայն մարդկանց ստրկացնելու համար այս Աշխարհի Տիրապետներին և նրանց թնդանոթային մսի համար կամ աւելի կարճ մարդկանց կորստի համար։

V.

Ո՞վ է արդեօք հնարել բոլոր այս 1015 ողջոխային խորհրդարան կամ մեռցնող և թնդանոթային կրօնները՝ Սատանան, թէ Եհովան։

VI.

Ե. Գ.—ում Եհովան ասում է. ցոյց տալ ողջ

1) Եր. 32—37...40.. 42։ 31—30...39։ 30—9, 22։ Ովս. 3—4, 5։ Ես. 60.

ծառաներին ինչ արժանի է լինել Շուտով,1) և հետևապէս երջանիկ է նա, ով կատարում է այս Գրքում գրուածը. որովհետև Նա է Ս. մարգարէների Եղբայրը և Իմ Հրեշտակների բարեկամը (կամ հաժախոհը). „Իսկ աստուածաբանը իւրաքանչիւր Սատանայական կամ առանձին հաւատի մէջ ասում է Եհովային հակառակը.“ ուղիղ չէ, ոչ որի ոչինչ չէ ցոյց տրուած,2) և երջանիկ է միայն նա, ով կատարում է մեր ցանկապատի կանոնադրութիւնների մէջ գրուածը“, ուրեմն էլ ինչու Սատանայական մարդիկ հաւատում են միայն իրանց ցանկապատային Խաւարի Ամենակալներին, այլ ոչ Եհովային։

## VII.

Պողոս առաքեալը հաւատացնում է, որ իբր թէ միւս առաքեալները, և նոյն իսկ Պետրոսն ու Բարնաբասը «սովորեցրին ստութիւն, այլ

1) Այսինքն՝ Ներոնի օրով եղած Հռովմէական հրդեհից կամ 63 թ-ից։

2) Մինչև իսկ ոչ Նիկողայոս Սքանչելագործին, ոչ Բասեղ Մեծին, ոչ Դոմինիկոս Ամենամեծին, ոչ Վիտերին, ոչ Կալվինին, ոչ Ցվինգլիին, ոչ Հենրիկոս IV, ոչ Մ. Ռուդամէտկինին, ոչ Պապին. ոչ Կաթողիկոսին, ոչ Պատրիարքին և ոչ նոյն իսկ Իրան Բոդիզին՝ թալմուդական ստի Համաշխարհային Ամենակալին։



ոչ Աւետարանական ճշմարտութիւն, և նոյն իսկ շողոքորթեցին։»1) Համեմատելով իսկ Պողոսի թղթերը Գործք առաքելոցի հետ. 21—20...26։ Մատ. 5—17։ 10—5։ 15—24։ 1—21։ 25—31 ...46։ Եր. 31—30...40։ 32—27...40...42։ 30—9, 22։ Ովս. 3—4, 5։ Ես. 56—7։ 2—2...4։ 11—6...9, 15, 16։ 54—10։ 60։ Մարկ. 11—17։ Եզ. 40-ըդից մինչև 48-ը։ 37—26...28։ 34—5։ 38 և 39։ Զաք. 14—5...12, 17, 18... 21։ Միք. 4—7։ Սրդի. 1—21։ Գ. ե. 7—4...8։ 14—1...4։ 18—4։ 21—3, 12։ 11—1, 2։ Եբր. 4—9։ Հռովմ. 11—26...29։ I և III. անհերքելի երևում է, որ „Պողոս առաքեալը ոչ միայն շողոքորթ է2) և Եհովայի Ամբողջ Իսրայէլական օրէնքի քայքայիչ, և մինչև անգամ Եհովայի մշտնջենական Դաշնադրութեան3) ոչնչացնողը Նրա նախածին Որդի Իսրայէլի հետ։4)“ Ուրեմն ով որ առաքեալներից, հէնց որ կեղծ կը լինի, կը գցի անշիջելի-դժոխային կրակը, համաձայն Ե. Գ.-ում Եհովայի սատանին։ 21—8։ 22—15։ 2—2։

Օրէնքի և Իսրայէլացոց հետ Եհովայի ու-

1) Գաղ 2—14...17։

2) Գործք. 21—20...26։

3) Սատանայօրէն՝ ուխտի։

4) 2 Մ. 4—22։ Սիր. 36—14։

նեցած դաշնադրութեան պաշտպանները են արդեօք՝ Պետրոսը, Բարնաբասը, Յակոբոսը, և Յովհաննէսը կամ նրանց քանդող Պօղոսը։

VIII.

Աստուածային ճշմարտութիւն է սովորեցնում արդեօք Սատանայական կամ առանձին հաւատի այն Աստուածաբանը, որը ոչ միայն չը դիտէ, այլ մինչև անգամ երբէք չի լսել Եհովայի այս Աշխարհավարական ծրագրի և Նրա1) 7-ն որոտների ասացուածների մասին։

IX.

Պէտք է լսել արդեօք այն Աստուածաբանին, որի մասին Եհովան ասում է, թէ՝ «Նա կոյր է, խուլ, պղնձէ ճակատով, քարացած սրտով, երկաթէ ծոծրակով2) և ընդունեց աստուածաբանական ուսմունքն ամենակամակորներից և Նրան 4000 տարի հակառակողներից կամ աւելի կարճ՝ ընդունեց ցանկապատային Աստուածաբանութիւնը Սատանայական ժողովից։"3)

1) Գ. Ե. 10—3, 4, 7։

2) Կամ աւելի կարճ՝ «Կենդանի մեռած։» Գ. Ե. 3—1։ Մատ. 8—22։

3) Ես. 43—8։ 48—4։ 45—5։ 1—2..4,..17։ 29—14։ 65—2, 15։ Եզ. 2—3,..8։ 3—7։ Գ. Ե. 2—9։ 3—9։ Մատ. 8—22։



Հ.Ս.Խ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ. Պետական Գրադարան
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1004/1985

X.

Ինչու Եհովան չի կարող թողնել Յուդայեցիներին Սատանայից, մինչև իսկ 4000 տարուայ ընթացքում, և ոչնչացնել Բոլոր սատանայական քրիստոնէութիւնները մինչև Արմակեդոնական օրը։ Տես. III.

XI.

Մթթէ սատանայական կամ առանձին հաւատների պաշտպաններին Եհովան չի ասի՝ «Կորէք հեռու Ինձանից անիծուած Ինձ հակառակողներ և չքացէք անշիջելի հնոցի մէջ ամբողջ անվերջ յաւիտեան»։1)

XII. Հարց Յուդայեցիներին.

Սատանայից կաշկանդուածներ ծառայութեան մէջ բոլոր ազգերում, և այդ պատճառով առաւել ևս դարձաք խստասիրա, նենգամիտ և ամարդի կողոպտիչներ կամ Սատանայական ժողով, Եհովային հակառակողներ 4000 տարի, օրհնուած Իսրայէլի երկու ցեղեր։

Եհովան ինձ իմացրեց, որ ձեր համաշխարհական ամենակալ սատանայական-թալմուդական ստից ձեզ լինելիք սոսկալի սպառնալիքների պատճառով՝ դուք չէք համարձակւի յանձն առնել

1) Նում. 1—2։ Գ. Ե. 22—15։ 21—8։ Եզ. 20—38։ Մատ. 25—41։

կատարելու այժմեան, ձեզ համար ուրախալի Եհովայի հրամաններն Իմ միջոցով։1) Այսպէս ուրեմն Դուք չէք վճռել արդեօք Եհովայից անիծուած այն դժոխային-թալմուդական ամենակալից ծածուկ, զետեղել ձեր քարացած սրտերում2) Նրա այն կենարար խօսքերը, որոնց նա արտասանեց ձեր նախահայրերին՝ Նրա յայտնուելիս Երուսաղէմում. „Զը կարծէք, որ Ես եկել եմ քանդելու Տորը3) և մարգարէների գրքերը։ Ոչ։ «Ես եկել եմ ոչ թէ քանդելու նրանց, այլ լրացնելու, որովհետև ճշմարտապէս հաւատացընում եմ ձեզ, որ աւելի շուտ կը չքանան երկինքն ու երկիրը, քան թէ կը չքանան, թէկուզ միայն մի նշանախեց, կամ գիծ Տորից, և այս իսկ պատճառով՝ ով որ կը քանդի Տորից թէկուզ միայն մի անարժէք հրաման, նա Աստուածային թագաւորութեան մէջ կը կոչի ամենաշնչին. իսկ ով որ կը սովորեցնի մարդկանց առանց որևէ փոփոխութեան Տորը, նա Աստուածային թագաւորութեան մէջ կը կոչի մեծ4) և

1) Որպէսզի կատարի Եհովայի նախագուշակութիւնը, որ դուք այժմ էլ չէք լսում Նրան։ Ես. 28—11, 12։

2) Եզ. 2—4։

3) Նրա Սինայի օրէնքը։

4) Լսի՛ր ես արդեօք Պօղոս Առաք. Տես. VII.



յայտնում եմ ձեզ, որ եթէ դուք, ձեր կատարմամբ Սինայի հրամանները Տորում, չէք գերազանցի թալմուդականներին1) և կեղծաւորներին,2) ուստի դուք չէք մտնի Աստուածային 1000 ամեայ թագաւորութեան մէջ։“3)

Լրացրեց իսկ Եհովան Տորը միայն այսպիսի ասացուածներով, որպէսզի դուք գազանութիւնից, ամարդութիւնից և նենգամտութիւնից լինէիք ամենահեզ, ողորմած ղէպի ամբողջ մարդիկ, անշահասէր, մաքրասիրա-արդար կամ օրինակելի-սրբեր և երկրի վրայի ամբողջ ազգերի համար սիրելիներ, կամ այլապէս ասած՝ որպէսզի դուք զետեղէիք ձեր չար սրտերում այն իսկ մարդասիրական և գթասիրա յատկութիւնները, որպիսիները և կան մեր ԵՐԿՆԱՅՈՐ ՀՕՐ4) մօտ։“

Եւ ահա միայն այդպիսիներին՝ ձեզնից համամաշխարհային-Եղբայրական մարգասէրներ եղածներին, Նա ճանաչում է իրՔ ճշմարիտ կամ համա-

1) Այսինքն՝ զպիրներին կամ ցադէկներին։

2) Այսինքն՝ փարիսեցիներին։

3) Մատ. 5—5, 6, 17...47։ Ղուկ. 16—17։ 21—23։

4) Մատ. 5—17...47։ Յովհ. 13—34, 35։ Գործք. 2—44, 45։ 4—32...37։ և Տես. VII. Այսինքն՝ Նա սովորեցրեց համաձայն 5 Մ. մէջ ասացուածին 28—14։ 27—26։ 2 Մ. 23—13։ Նաւ. 4—7։ 23—6։ Ես. 40—8։ Եր. 11—3։ Սաղմ. 119 (118)—8, 9, 21։

սեռ որդիներ1) և այն ժամանակ Նա կը տանի ձեզ կրկին Նրա Իսրայէլական երկիրը, և այնտեղ կը հիմնի ձեզ վրայ համատարակային հաւատ դէպի Նա համաշխարհային-եղբայրական Սիրով, Բարօրութեամբ, Ազատութեամբ, Ուրախութեամբ, Բաւականութեամբ և Խաղաղութեամբ հազար տարով և բոլոր ազգերի ու ցեղերի համար. իսկ ձեր երկարամեայ2) Երկնային կեանքը վերջանալիս՝ Նա կը դարձնի ձեզ անմահ, ինչպէս և ցոյց է տրուած և այստեղ XX. յօդուածում։

Ահա այս իսկ Տէրի լրացումներից, համաշխարհային-եղբայրական սիրոյ և դիտասրտութեան մասին, նոյն իսկ և դէպի ձեր թշնամիները, կամ դէպի հեթանոսները, հեռացրեց Սատանան, ոչ միայն ձեր նախահայրերին, այլ մինչև անգամ և քրիստոնեաներին։"

## XIII.

*Պատասխան Եհովային համաշխարհային Գ— Բաբիներ Բուշիլներից։*

«Վերադարձէք դուք դէպ Ինձ, այդպէս և Ես կը վերադառնամ դէպի ձեզ,» կոչում է Ե-

1) Գ. Ե. 21—7։

2) Ինչպէս կաղնի։ Ես. 65—20։



հովան Յուդայեաններին 4000 տարի։1)

*Պատասխան Բուշիլներից.*

„Սպասիր խնդրենք, թէկուզ միայն 100 տարի ևս, որովհետև մենք դեռ բոլորովին չենք կոդոպտել հեթանոսներին։

Իսկ ահա երբ որ մենք, կը հաւաքենք նրանցից բոլոր ոսկին մինչև վերջին մսխալը, այն ժամանակ մենք, ոսկու և գոհարների կոյտերով կը վերադառնանք դէպի Աղամնան, այլ ոչ դէպի Եհովան, որովհետև Սատանան սաստիկ արգելեց մեզ արտասանել יְהוָה անունը և ճանաչել Նրան ով է նա։"

## XIV

*Վերջին փորձը պրկել Սատանայից թէկուզ միայն 100,000 Յուդայեաններից մէկին։*

Լսեցէք երկիւղածութեամբ, Եհովայից մերժուած օրհնուած Իսրայէլի 2 ցեղեր։

Իմ անկեղծ ցանկութիւնից՝ փրկելու ձեզ կորստից, ես վճռեցի էլի մի անգամ յիշեցնել ձեզ, որ ով որ ձեզնից կը հեռանայ Սատանայից և նրա ժողովից, կը զգի մինչև վերջին տարը նրա բոլոր տարդի-սնահաւատ կամ չհուդական օրինակութիւնները և նրա Ս. Գիրքը, լցած

1) Զաք. 1—3։ Եր. 3—14, 12։ Յովհան. 2—12, 13։ Ովս. 14—2։ Եզ. 18—31։ Ես. 31—6։ 5 Մ. 30—1 .. 8։

տարաձայնութիւններով, հակասութիւններով, անմբռնութիւններով և առասպելներով և կը յարի Եհովայի այս նոր-կտակարանային Իսրայէլական Կրօնին, և կը սկսի սրբութեամբ կատարել Նրա այժմեան հրամանները, և չը խնայելով ոչինչ աշխարհում, և նոյն իսկ իր այս մահկանացու կեանքը, կը սկսի զբաղուել գիշեր ցերեկ միայն Նրա1) գործերով, այսինքն՝ Նրա այս նոր-կտակարանային-Իսրայէլական օրէնքի տարածմամբ, այսպիսի Յուդայեանին Նա կը ների նախկին բոլոր յանցանքները և կը գրի նրան Ս. մարգարէների եղբայրների և Նրա2) հրեշտակների ընտրեկամների թւում, և հետևապէս իր ժամանակին Նա կ՚անի նրան անմահ։ Իսկ այն ժամանակ Նա որտեղ կը տեղաւորի նրան բնակուելու՝ Երուսաղէմում արդեօք, կամ Ղրիմում, Երկրի վրայ կամ Երկնքում։

Այս մասին նա չպէտք է հետախուզի, այլ միայն ասի Եհովային. „Թող լինի Քո կամքը։"

Իսկ որպէսզի դուք, Եհովայի այս մտադրութեան հակառակորդներ, չը արանջաք Նրա անողորմածութեան վրայ դէպի ձեզ, Թող Ձեզ

1) Գ. Ե. 2—26։ 14—13։
2) Գ. Ե. 22—9։ Սաղմ. 69—29։



յայտնի լինի,1) որ երբ կը թնդայ 7-րդ որոտն ամբողջ Սատանայական Աշխարհի վրայ, այն ժամանակ ձեզ և ձեզ նման Նրա այս նորհանրամարդկային օրէնքի հակառակորդների վրայ ցած կը գլորուի սոսկալի կորուստ. և թէպէտ այն ժամանակ դուք կը սկսէք զղջալ, ինչպէս Աղամն ու Եւան, կամ ինչպէս ձեր նախահայրերը Երուսաղէմն աւերման ժամանակ, հայցել Նրան ձեզ՝ ձեզ խնայելու, բայց լսելու ձեր ողբերին՝ այն ատեն Նա ժամանակ չի ունենայ, ամբողջ Աշխարհում բորբոքած, սոսկալի կամ Նրա վերջին կուի պատճառով Սատանայի և Սատանայական մարդկանց դէմ. և դուք պէտք է անյայտանաք Երկրի երեսից ուղիղ 1000 տարով։ Աստծով ճշմարիտ, Ամէն։

Տեսէք՝ դէպի ձեզ ունեցած իմ սիրուց դեռ նախազգուշացնում եմ Ձեզ. մի խստացրէք Ձեր սրտերը, երբ կը հասնի ձեզ Եհովայի այս ձայնը։ Սաղմ. 95—7 ..11։

## XV.

*Վերջին փորձը Սատանայից հեռացնելու միլիոնատեր Լիւտերականներից թէկուզ միայն մէկին։*

Մշտապարծ և ըմբոստ-զոռոզ Փոն-բարոնները և հէրրինները, բայց Աստծով մահուան և զո-

1) Եզ. 2—5 Գ. Ե. 22—11։

ողութեան կենդանի մեղրածնե՛ր, նրա լիւսէրական զառացանքներով, դիմակաւորւած Եհովայի ճշմարտութեան կերպարանքով,

Իզուր էք դուք կատաղում և սպանում թնդանօթներով ու սուիններով, մտրակներով ու խարազաններով բոլոր այն Աստուածային որդիներին,1) որոնք հաւատացնում են ձեզ, որ ձեր Լիւսէրական բազմաթնդանօթ ցանկապատը Քրիստոնէութեան մէջ է ամենազարշելին և մեղսակիրը, և որ այս պատճառով ձեր այսպիսի ապականւած Ժողովից շատ քիչ են արժանաւորները Եհովայի հետ սպիտակ շորերով շրջելու, որովհետև նրանց այսպիսի հաւատիացումը ձեզ Մարդկային չէ, այլ նոյն ինքն Եհովայի ասացւածը Ե. Գ.-ում։ 2—10։ 3—1...4, 17, 18։ 16—15։ 21—8, 27։ 22—11, 15։ Մատ. 5—22։ 1 Կոր. 13—1...3։ 1 Յովհ. 3—10։ Հռովմ. 13—9։

Եւ այսպէս.

Ով որ ձեզանից դեռ բոլորովին մեռած չէ սուպէրինտէնդէնական և պատօրական զառանցանքներով, նա թող լոի Եհովայի այս քարոզը հեռու կենայ շուտով Սատանայից և նրա զարշելի կամ կորստաբեր Լիւսէրական Ժողովից. որովհետև շուտով, շուտով ցած կ'ընկնի ձեզ վրայ սոսկալի կորուստ բազմաթիւ-թնդանօթներից-իսկ1) և Բիսմարկեան խռովարարից։ Աստծով ճշմարիտ, Ամէն։

## XVI.

Եհովայի ձայնն իմ միջոցով երկոտանի շներ2) դարձած բուլդարներին զուտ Բարդէնարեան Փիլիտափայրմիւնից եւ Կոխ-Լիւտէրական Աստուածաբանութիւնից, որ նրանք ստացել են այս աշխարհի Աստծուց։

Մարմնաւոր Անմահութիւնը, Համաշխարհային եղբայրական Միակրօնութիւնը, Համամարդկային Բարօրութիւնը և Համատարած Խաղաղութիւնը, բղխում է միայն Անմահութեան, Խաղաղութեան և սիրոյ Աստծուց, այսինքն՝ Եհովայից, հետևապէս եթէ դուք, Բուլդարներդ, յետ չէք կանգնի մահուան, թշնամութեան և թնդանօթների Աստծուց և չէք յարի Եհովային Նրա Համամարդկային Հաւատի մէջ, այն ժամանակ դուք ինչպիսի կառավարութիւն էլ չը սահմանէք ձեզ մօտ և դուք երկոտանի շներից ինչպիսի գլխաւոր-խարդախապետի էլ չը ենթարկւէք, նրա թնդանօթային մսի, փառքի, շքանշանային

1) Դաղ. 3—26։



1) Մատ. 26—52։

2) Գ. Ե. 22—15։

կապիչների կրքերի քաղցրութիւնների և նրա պալատների կառուցման համար, ձեղանից կոդոպատած փողերով, և դուք ինչպիսի դժոխային խռովարար հաւատի էլ չը դառնաք, կը չքանաք Երկրի երեսից այնպէս, ինչպէս չքացան շատ նշանաւոր ազգեր իրանց աստուածացրած ջատագովութիւնների1) հետ միասին, ուղղահաւատ ամենակալներով և ամենաուղղափառ-թընդանոթային մսի խաղաղներով. իսկ մեռելների2) երկրորդ յարութեան ժամանակ՝ դուք կենդանի3) կը ձգուէք կրակի խորխորատը, բոլոր այդպիսի իսկ երկոտանի շների հետ միասին. Աստծով ճշմարիտ, Ամէն։

## XVII

Երրորդ թուղթ Միսիոնարներին, բուդդայականներին4) ղէպի զանազան, Դժոխային Քրիստոնէութիւններ դարձնողներին, այսինքն՝ անաստղջատաբուդդայականներին5) Աստուածների Աստծուն6) պաշտելուց հանողներին և նրա հետ ուրիշ երկնային-իսկ1) Աստուածներին2) ղէպի Սատանային պաշտելը Քրիստոս անուան տակ, Գ. Ե. 13—8։

Դժոխային սատանայական լէշապաշտներ և տախտակապաշտներ և սատանայական-աւետարանային հրաշագործներ, խարդախապետներ, բարձներ, ճամարտակներ, թնդանոթաձիգ սարկացնողներ, նոյնիսկ Աստուածային որդիներին,3) բարբարոսներ, լէշակերներ, ծխախոտավաճառներ, միկիտանճիներ, անառակներ, դերասաններ, ծաղրածուներ, դիւային-մասխարաներ, կամ կարճ՝ երկոտանի շներ։4)

Եթէ դուք կա, ինչպէս Յուդայականներն ու Լիւտերականները, կոյր էք և խուլ, որ նոյն իսկ և մինչև այժմ չէք կարողանում տեսնել5) և լսել Եհովայի այժմեան համաշխարհային ձայնը, որ „Յիսուսն ու Եհովան է միևնոյն իսկ

1) Գործք. 14—11, 12։ Գ. Ե. 1—4, 5։ 4—4։

2) Ինչպէս բարեխօսների, նրանց համար Աստուածների-Աստծու մօտ, այլ ոչ թէ մի բարեխօսի, ինչպէս սովորեցնում է Սատանան 1 Տիմ. մէջ 2-5։ Հռովմ. 3—34։ Սաղմ. 137—1։ 135—2։ 85—8։ 2 Ս. 15—11։ 18—11։ 22—28։ Դան. 2—47։

3) Գաղ. 3—26։ 5 Մ. 14—1։

4) Գ. Ե. 22—15։ 9—20, 21։

5) Եւ Աստուածային ճշմարտութիւնը, ականներն, ինչպէս 5 մատները ձեռքի վրայ։

Աստուածը սուրբ Մարգարէների կամ Նախայաւիտեան-Առաջին և Մշտնջենական Վերջին Մարդը, Իսրայելացիների Թագաւորը և Փրկիչը կամ Նրանց Մէսսիան,1) և որ Նա այժմ իմ միջոցով կոչում է բոլոր ազգերին և ցեղերին ի Մի հաւատ դէպի Նա, դէպի համաշխարհային-եղբայրական սէր կամ խաղաղութիւն 1000 տարով, և իրանց հաւատ մարմնաւոր անմահութեան ծառաներին հրաւիրում է դէպի Նրա Կենարար ջրի աղբիւրը, այսինքն՝ դէպի կատարումն Նրա հրամանների Գ. Ե.-ի մէջ2) «ուրեմն Այդ անհերքելի նշանակում է, որ դուք այնպիսի-իսկ կատաղի (և յիմարագոյն) հակառակորդներ (կամ չը հաւատացողներ) էք Նրան, ինչպէս Յուդայեանները և Մահմեդականները, իսկ այդ էլի նշանակում է, որ դուք այնպէս կուրացած էք Սատանայով նրա քրիստոնէութեամբ,3) որ ոչ մի կերպ չէք կարող հաւատալ Եհովայի խօսքերին, որ Քրիստոս4) անուան տակ բռնել է ձեզ Սատանան նրա զանազան, դժոխային քրիստոնէական ցանկապատերում և այնտեղ դարձրել ձեզ երկոտանի շներ՝ որպէսզի ահեղ դատաստանին դուք ձգվէք անշիջելի կրակի հնոցը։ Աստծով ճշմարիտ. Ամէն։

1) Տես. Բնաբանը - 1, 2. Վին.։

2) Տես. VI.

3) Տես. XII.

4) Յուդայեաններին էլ Եհովա անուան տակ, իսկ Մահմեդականներին մի ինչ որ անտեսանելի Ալլահ անուան տակ։ Տես. III.



Խելքի եկէք, հրաժարուեցէք Սատանայից և թարգմանեցէք Եհովայի այս աւետումը Բուդդայական լեզուներով1) և ուղարկեցէք այն Նրանց բոլոր քաղաքներն ու գիւղերը և հաւատացէք Եհովայի խօսքերին, որ ձեր այսպիսի ծառայութեան համար Նրան, Նրա այս վերջին ճակատամարտին Սատանայի դէմ, Նա կը դարձնի ձեզ ոչ միայն մարմնաւոր-անմահներ, այլ և լուսատուներ, ինչպէս աստղեր,2) իսկ ով ձեզանից անձնազոհութեամբ3) կը կանգնի հակառակ Սատանայական յարձակումներին, նրա հրապոյրներին և գայթակղեցուցիչ Գաղանիքներին, նրան Եհովան կը նստեցնի Իր հետ Իր Աթոռի վրայ։ Գ. Ե. 3—21։

## XVIII.

*Իմ պատասխանները Մահմեդական աստղաբաշխին.*

Աստղաբ. Դուք հաւատում էք արդեօք Աս-

1) Եւ ձեր Հայրենիքների լեզուներով։

2) Դան. 12—3։

3) Ղուկ. 14—26, 33։ Մատ. 10—39։

տրծուն։

Ես. Հաւատում եմ, բայց միայն իմ Աստրծուն, այլ ոչ թէ ձեր։

Ա. Իսկ ինչով է դանդաղանվում մեր Աստուածը Ձերից։

Ես. Եթէ հազարերորդ Արևի յետև էլի քառիլիոն մղոն անցնես, այնտեղ էլ ձեր Աստրծուն չես գտնի։1) Իսկ մեր Աստուածը շրջում է երկրի վրայ և մտնում է իր բարեկամների մօտ2) և ընթրում է նրանց մօտ նրանց հետ միասին, նման այն բանին, ինչպէս Նա մտաւ Աբրահամի, Բազասամի, Յակոբի, Յորի, Մելքիսեդեկի մօտ, Ադամի ու Եւայի մօտ և Մահմէտի3) մօտ և ճաշեց 75 հրէաներով Սինայի վրայ։

Ա. Այնպէս է դուրս գալիս, որ ձեր Աստուածը իսկ Մարդ է։

Ես. Այո, մարդ է, միայն Առաջինը և Վերջինը, մեռած էր և կենդանացաւ ողջ անվերջ յաւիտեան, և ունի իր իշխանութեան տակ դժոխքի և մահուան բանալիները։

Ա. Նշանակում է Նա Անուն էլ ունի։

1) Այս Անվերջ Աստուածը հրբայեցիներէն Մեսիան է։ Դան. 11—38.

2) Ղուկ. 12—4։ Յովհան. 15—15։ Յակ. 2—23։

3) Մարտի 14-ին։



Ես. Նրա Անունն է Նախայաւիտեան-Աքանչելի Եհովա։

Ա. Իսկ ձեր Աստուածը Հայր ունի։

Ես. Ունի և Հայր և Մարդ-իսկ, բայց միայն Նրա Մարմինը նման է Եաշմօսարդ քարին։

Ա. Ուրեմն դուք երկրպագում էք այդ երկու Աստծուն։

Ես. Ո՛չ, մենք երկրպագում ենք միմիայն Եհովային, որովհետև Հայրը տուեց Իր Որդի Եհովայի իշխանութեան իր ամբողջ Տիրապետութիւնը, Երկնային ու Երկրային։1)

Ա. Իսկ դուք ո՞րտեղից էք վերցրել այդպիսի Աստուածաբանութիւնը,

Ես. Ողբ հրբայական Մարգարէների գրքերից և Ղուրանից, իսկ գլխաւորը Երկնային Գրքից, Բուդդայական սուրբ գրքից։

## XIX.

Սրբերի2) պատասխանները հարցերին։

Ինչով են հաճոյանում Աստանային բոլոր հաւատների քահանաները։

— Մարդկանց տեղափոխութեամբ մի խառվարար ցանկապատից միւսը և քշելով նրանց

1) Դան. 7—13, 14։ 1 Կոր. 15—27։ Մատ. 11—25։ Գ. Ե. 1—18։ 3—12, 21։ 21—7։ 2 Մ. 20—3։

2) Գ. Ե. 14—12։

հոգիները բիլիոնաւոր վերստեր,1) այնտեղ նրա արքայութեան մէջ, կամ որևէ շաբուկ։

Իսկ ազնուականները

— Աստուածային որդիների2) սարկաւմամբ և մարակների հարուածմամբ նրանց ներքին յուսոյքը՝ ասելով նրանց. „Մի մոռացէք, անպիտաններ, որ մենք ձեր մերձաւորներն ենք։

Իսկ թագաւորները

— Խաղերով՝ հանդիսաւոր մաղթանքներում, գովաբանութիւններում, դիմակահանդէսներում և զօրահանդէսներում իսկ գլխաւոր դարձնելով մարդկանց թնդանօթի միս և անհաւատութեամբ Եհովային, որ նրանք նզովուած են3) նրանց ճըշմարիտ կրօնների պատճառով։ Մատ. 25—41։ VI և XI.

## XX.

*Երկու հարց ամեն տեսակ Քրիստոնէութեան.*

1. Ինչից առաջացան և առաջ են գալիս Քրիստոնէութեան մէջ բազմաթիւ ճշմարիտ

1) Տես. Դաւիդովի Սինոդական Մ. Աշխարհագրութիւնը։ 2) Գաղ. 3 - 6։ 5 Մ. 14—1։

3) Ինչպէս և Ջհուդները Ես. 65—15։ Մատ. 7—23։ 22. 8—11, 12։ և ինչպէս սիրողներ և կատարողներ Սատանայական Աստուածաբանութիւնների։ Գ. Ե. 22—15, 21—8, 27։



կրօնների կամ ցանկապատերի բաժանումները։

II. Ինչու՞ Սատանան արդիլում է, ոչ միայն չը վճռել այս հարցը, բայց մինչև անգամ և նրա մասին չը յիշելը։

№ Այս հարցը, բաժանման մասին այժմ անհրաժեշտ է տալ բոլոր Յուդայականութիւնների Մահմեդականութիւնների և բուդդայականութիւնների մէջ։

XXI. Հարց երկրային բոլոր թագաւորներին.

„Ինձնով թագաւորները թագաւորում են, այսինքն՝ որին ես ցանկանում եմ, նրան էլ տալիս եմ թագաւորութիւն։“

Այսպէս արդեօք Աշխարհի այն ամենակարող Ամենակալը չի ասում այս Մատթէոսի Աւետարանի մէջ, որին երկրպագում են բոլոր մարդիկ, բայի կենաց-Գրքում1) գրուածներից։

XXII. Աններելի յանցանք.

Ով որ Սատանայի2) հրամանով, նրա ցանկապատի պաշտպանութեան համար, կը շպրտի այսպիսի Կշտամբանք Եհովայի վրայ, որ երբ թէ՝ «Այս Կոչը բոլոր մարդկանց դէպի անմահութիւն, Հաւատի Միութիւն և դէպի Խաղաղութիւն 1000 տարով, Ջհուդական Մեսիայի կամ Սուտ-Քրիստոսի գործն է, այլ ոչ թէ Եհովայի. որովհետև (էլ), ամեն մէկին (Սատանայով կուրացածին) պարզ տեսանելի է, որ ասացուածը Ես. մատ 41—25։ 42—6.. 1. գալիս է Քրիստոսի3)

1) Գ. Ե. 13—8։ 2) Գ. Ե. 13—6։

3) Միայն Յուդայականների մատ եկածի, նրանց Տորը լրացնելու համար Տես. XII.

վրայ, այլ ոչ թէ Եհովայից1) այս համաշխարհային ուղարկվածի վրայ. հետևապէս այսպիսի կշտամբանքը Եհովայի վրայ չի ներվի Մարդուն ոչ այս կեանքում և ոչ էլ մեռելների երկրորդ Յարութեան ժամանակ, այլ կը ձգվի կրակի հնոցի մէջ, ինչպէս սիրող և կատարող Սատանայական ցանկապատային սատութեան, և այդ պատճառով չէ գրված Կենաց-Գրքում, Աստծով Ճշմարիտ, Ամէն։

XXIII. Եզրակացութիւն.

Եւ այսպէս, ես էլ Մովսէս և Եսայի մարգարէների նման, վկայ եմ կանչում Երկինքն ու Երկիրը,2) որ «ուղիղ են և ճշմարիտ» Եհովայի3) խօսքերը, որ „Այս ամբողջ աշխարհը ծածկված է Սատանայական Խաւարով և հետևապէս բոլոր Թագաւորները, ազգերն ու ցեղերը (նրանց բոլոր խաւարապաշտ-ճշմարիտ կրօններով) գտնվում են կորստաբեր մոլորութեան մէջ,4) այսինքն՝ Քրիստոնեաները, Յուդայեանները, Կարաիմները և Մահմեդականները դեռ ևս չեն ճանաչում իրանց Աստծուն և ոչ Սատանային, ոչ 6000-ամեայ Նրա պատերազմը Սատանայի դէմ, և 4000 տարի Սատանայական Յուդայեանների

1) Այս կշտամբանքով Եհովայի վրայ. ոմն Պաչայկեյ (Սարատովից) վերադարձրեց Կովկասեան մերբարեկամներին կրկին Սատանայի մօտ։

2) 5 Մ. 32—1։ Ես. 1—1։

3) Գ. Ե. 3—14։

4) Ես. 60—2...20։ Գ. Ե. 16—10։



դէմ և Դժոխային Քրիստոնեաների դէմ 1,825 տարի. ոչ Անմահ մարդկանց, ոչ Նրա Իսրայէլական Թագաւորութիւնը Արարէթում կամ անմահ Մելքիսեդէկի1) օրով, ոչ Երկրի Անվերջ կերպարանափոխութիւնները և անվախճան կեանքը Նրա հետ նրա վրայ, ոչ էլ առաջիկայ ոչընչացումը Սատանայական կամ ցանկապատային մարդկանց 1000 տարով2) և չեն հասկանում, որ հաւատալ Աստծուն (Եհովային) Խօսքով3) և ճշմարտապէս հաւատալ Նրան այնպիսի իսկ զանազանութիւն է, ինչպէս Երկինքը Երկրից. որովհետև դևերն էլ են հաւատում Նրան, բայց ճշմարտապէս չեն հաւատում Նրան, և առանձնապէս ճշմարտապէս չեն հաւատում Նրա այս Համաշխարհային Աւետմանը և ասում են մարդկանց.

Այս Աւետումը Եհովայինը չէ, այլ մարդկային իսկ զառանցանքներ են. Յակ. 2—19։

Ահա թէ ինչու և այս կենսատու Աւետումը հրամայեց այժմ Եհովան, սփռել և տարածել դէպի բոլոր Թագաւորութիւններն ու ազգերը, որպէսզի Խաղաղարարները (կամ Մարդա-

1) (3 (4) Ներ. 13—40...47։

2) Ես. 2—11...21, 34։ Ղուկ. 17—34...37։ 1 Սող. 5—3։ Գ. Ե. 2—23։ 13—19։ Ես. 10—21, 22։ Եզ. 20—35...38։

3) Ինչպէս Աբրահամն ու Բաղամը 1 Մ. 22—11, 12։ 4 Մ. 22—18։

սէրները)1) բոլոր 1015 Կրօնքներից լսելով Եհովայի Այս ձայնը հրաժարուեն Սատանայից և յարեն Եհովային, որպէսզի նա դարձնի նրանց էլ այնպիսի-իսկ մարմնաւոր անմահներ, ինչպէս և 144,000հրէաները,2) Մելքիսեդէկը,3) Ենովքը, Եղիան, Յովհաննէսը, Զամօլկվինը,4) Պիւթագորասը,5) Զրադաշտը,6) Նովգորոդեան Եհովականների հիմնադիրը,7) Զաքարիա III-ի,8) և Մատթ. մէջ յիշուածը 27—52, 53։ և բազմաթիւ միւսները։ Գ. Ե. 7—9, 15։

## XXIV.

*Այս Համամարդկային կամ Նոր Կտակարանային-Իսրայէլական Կրօնի կամ Եհովայի բարեկամների և բարեկամուհիների Օրէնքը.*

Ով որ զգայուն է այս Աստուածային կոչին դէպի Անմահութիւն,9) նրա համար այժմ պարզ

1) Մատ. 5—9։ Յակ. 3—18։ 4—4։ 1 Յովհան. 2—15։ Հռովմ. 15—33։ 16—20։

2) Գ. Ե. 7—4. 8։ 14—1...4։

3) Եբր. 7—33։ Սաղմ. 109 (110)—4։

4) Դանեան Կօզակ։

5) Զամօլկվինի աշակերտը, 500 տ. Ք. Ծ. առաջ։

6) Պարսիկ, գուշակող 400 տարի յետոյ աստղի երևալու մասին Բեթղեհէմի վրայ Եհովայի ծննդեան ժամանակ։

7) Սատանայօրէն՝ «Սարիզոնիկով։»

8) Սա Հրէայ էր Միտավայից.

9) Կամ ով որ ծնուած է Եհովայից։ Յովհ. 1—13։ 8 44, 47։ 10—27։ 1 Յովհ. 3—10։ 2—29։ Իմաստ. 18—13



է, որ՝

1. Եհովայի բոլոր բարեկամներն ու բարեկամուհիները պէտք է անձնազոհութեամբ հաւատան Նրան խօսքով աւելի, քան թէ Աբրահամն ու Բաղաամը։ 1 Մ. 21—1, 12։4 Մ. 22—18։

2. Նրանք պէտք է ապրեն իրանց-մէջ այնպիսի-իսկ սիրով, ինչպէս և Եհովան սիրեց Նրանց։1)

3. Զը պղծել իրանց հոգիները անմաքուր կերակրով և խմելիքով և ոչ էլ Սիֆիլիսային, ծխախոտային և գինետնային պղծութեամբ, այլ պէտք է լինեն սուրբ այնպէս, ինչպէս սուրբ է և Եհովան։2)

4. Զը կոչվել և չը կոչել ոչ ոքի ոչ հայր, ոչ ուսուցիչ և ոչ դաստիարակ կամ հովիւ,3) այլ ամեն մէկը պէտք է ինքը ուսումնասիրի Եհովայի համամարդկային Կրօնի օրէնքը։ Հետևապէս Նրանք բոլորը պէտք է լինեն գրագէտ։4)

5. Իսկ որովհետև հաճելի եղաւ Եհովային, յայտարարել այժմ իմ միջոցով այս Համաշխար-

1) Յովհ. 13—34, 35։ 1 Յովհ.—16։ Հռովմ. 16—4։ Գործք. 2—44, 45։

2) 1 Պետր. 1—15, 16։ 3 Մ. 11—43, 44...47։ Ես. 65—4, 5։ 66—17։ Գ. Ե. 21—8, 27։ 22—11, 15։ 16—15։ 3—4։ 2 Կոր. 6—17։ 1 Կոր. 6—9...11։ Եբր. 10—26...28։

3) Մատ. 23—8...10։ Յովհ. 10—11։ Ես. 40—11։ Սաղ. 99 (100)—3.

4) Սաղ. 1—2։ 5 Մ. 6—6...9։ 11—18, 21։ Գ. Ե. 1—3։ 22—7, 9, 17։

հային Կրօնի Օրէնքը արդէն ոչ թէ Եբրայա-
կան, այլ Ռուսաց լեզուով, հետևապէս սրանից
անհերքելի հետևում է, որ նրանք բոլորը պէտք
է գիտենան խօսել և գրել ռուսերէն։1)

6։ Բոլորովին չը կասկածել, որ Եհովան խաչ-
ուեց, Մեռաւ և կրկին կենդանացաւ անվախճան,
և որ Նա է Մարդ-իսկ։

7. Հաւատալ Եհովայի խօսքին, որ Նա չը
փոխեց Իր Սինայի Օրէնքը Իսրայէլացիների հա-
մար, ոչ որևէ Քրիստոնէականով կամ Նոր Յու-
դայականով,2) այլ միայն լրացրեց այն Նոր-
կտակարանային պատգամներով,3) բոլոր-իսկ 666
Քրիստոնէական և 10 Յուդայական Օրէնքներն
առաջացան և առնչանում են սատանայական
աստուածաշնչից,4) որպէսզի կատարւի ասացւա-
ծը, որ Եհովան, իր խաչելութեան մահով, բե-
րեց այս սատանայական Աշխարհը, ոչ թէ հա-
մամարդկային կամ ոչ թէ ամենին միացնող և
խաղաղացնող Ճշմարտութիւն,5) այլ վատթար

1) Տես իմ օրհներգութիւնները և Աստուածպաշ-
տութիւնը։

2) Տես.XIII.

3) Այսինքն՝ անձնապահ դիւրահաւատութեան և անձնվիրու-
թեան մասին դէպի Նա, և սիրոյ մասին դէպի բոլոր մարդիկ Տես.
XII. 4) Քրիստոնէականներն-իսկ գլխաւորապէս 4 Սատանայ-
կան աւետարաններից, սարսափելի անհամաձայներից և նրա
Ժողովրդ Առաքեալների անունով։ Գ. Ե. 12—9։ 13—8։ 2—24։

5) Որովհետև այս ճշմարտութեան համար, Նա միայն այժմ
ընտրեց ինձ, ինչպէս ցոյց է արված ընտրանում։



ժողովուրդին կամ բաժանում Սատանայական
մարդկանց զանազան և խռովարար ցանկապա-
տերի։1)

8.—Որ Յուդայեանները ամենատմարդ-
ամենանանահաւատ և Նրան հակառակող ժողովուրդ
են կամ Սատանայական ժողով և հետևապէս նրանց
ջհուդական օրէնքից պէտք է հեռանալ առաւել,
քան թէ խոլերայից. որովհետև ջհուդականը մեռ-
ցնում է մարդուն ոչ թէ ժամանակաւորապէս,
այլ ողջ անվերջ յաւիտեան։

9.—Որ դատաստանն ու վրէժխնդրութիւնը
Եհովայի կողմից բոլոր Սատանայական մարդ-
կանց վերաբերմամբ կը սկսվի միայն այն ժա-
մանակ, երբ կը հաւաքվի մեր անմահ եղբայր-
ների և բարեկամների որոշ թիւ, սատանայական
մարդկանց ձեռքով մեռցրած Այս համամարդ-
կային Կրօնի պատճառով Գ. Ե. 6—10, 11։

10.—Որ բոլորի համար ուրախալի Եհովա-
յի թագաւորութիւնը Իսրայէլի մէջ 1000 տարով
կը սկսվի միայն այն ժամանակ, երբ Յուդա-
յեաններից գոնէ միայն 7000 հոգի կը հրաժար-
ւեն Սատանայից։ Ես. 10—21, 22։

11.—Որ այդ (վերջին)ժամանակ բանը կը
հասնի շատ տանջվելու մեր այն Սուրբ եղբայր-
ներին և բարեկամներին, որոնք կը սկսեն ճըշ-
տութեամբ կատարել Աստուածային հրամանները և չեն հրաժարւի Եհովայի կամ Ցիսու-

1) Ով որ այս դէպքը չի տեսնում. նա կուրացած է Սա-
տանայով ընդմիշտ յաւիտեան

սեան1) այս հաւատից։

12.—Որ այս Գրքոյկի մէջ յայտնագործած Աստուածային2) Գաղտնիքը չէր կարող մարդի գալ, առանց յայտնագործելու նրան ինքնին Եհովայով, ոչ միայն որևէ մարդու, այլ և Հրեշտակի։ Տես Բնարանը։

13.—Որ քահանաների, կաթոլիկ քահանաների և հովիւների ձեռքով մկրտուածները և նրանց ձեռքով թթու, բաղարջ և հոտած հաղորդութիւններով հաղորդուած Երկոտանի շները և գարշելիները կը ձգուեն կրակի հնոցի մէջ։

14.—Որ Եհովայի 7000-ամեայ Կռիւը Սատանայի դէմ առաջանում է նրանից, որ Սատանան ուզում է, որ մարդիկ չը լինեն այս մոլորակի վրայ. և դրա համար էլ Նա ոչնչացնում է նրանց Մահով.3) իսկ Եհովան ցանկանում է, որ մարդիկ լինեն նրա վրայ ողջ անվերջ յաւիտեան. և դրա համար էլ, թէև մէկ-մէկ և մեծ խոչընդոտներով Սատանայի կողմից, հաւաքում է մարդկանց ԻՐ անմեռ Աշխարհը, բոլոր սատանայական ազգերից և կրօններից. և կը հաւաքի նրանց մինչև 7000 տարեայ վերջը։

15.—Որ ինչպէս Սինայեան, նոյնպէս և եդեմայրա-մարգարէական Օրէնքի մէջ Եհովային հա-

1) Գ. Ե. 14—12, 13: 2—10, 26: 20—4:

2) Գ. Ե. 10—7: 17—17:

3) Իմաստ. 1—13: 2—23, 24: Ես. 28—15, 18: Ես. 33—11:



ճելի է լինելը կայանում է միայն մի խօսքի՝ «սիրոյ» Կատարման մէջ։

16.—Որ ով որ այնպէս ուժեղ կուրացած է—Սատանայով, որ մինչև անգամ և Այս Գրքոյկը կարդալուց յետոյ չի տեսնի, որ ես ինքնակոչ չեմ, այլ նա ինքը, որին Եհովան առաջ բերից հիւսիսում, հետևապէս այդպիսի կոյրը անքակտելի է արդէն մահուան հետ ունեցած միութիւնից կամ Սատանայական ցանկապատից։ Ես. 28—15, 18: Եզ. 33—11:

17.—Որ այս Գրքոյկը այնպէս թանկագին է իրաքանչիւր մարդու համար, որ նրա համեմատութեամբ Գոհարների սարերն էլ ոչինչ են, և հետևապէս Եհովայի բոլոր բարեկամներն ու բարեկամուհիները պէտք է անձնազոհութեամբ տարածեն Նրան դէպի բոլոր թագաւորութիւններն ու ազգերը։

18.—Որ ով որ կը բարկանայ Եհովայի բարեկամի, կամ բարեկամուհու վրայ, նա չի ստանայ անմահութիւն։1)

19.—Եթէ Սատանան կը սկսի տանել նրանց կրկին դէպի առանձին Կրօն, կամ թէկուզ և դէպի համամարդկային, բայց Մօտղիմեան,2) հետևապէս նրանք պէտք է անձնատուր չը լինեն Սատանային Նրանից բղխող ոչ մի տեսակի անցաւոր բարիքների համար և ոչ մի տեսակի սարսափելի տանջանքների պատճառով. այլ յաղթել նրան, թէկուզ և այնպիսի-իսկ մարտիրոսական մահով, որպիսով յաղթեց նրան Ինքը Եհովան Գ. Ե. 3—21։

20.—Եթէ-իսկ Սատանան սկսի փաղաքշաբար առաջարկել նրանց լսելու նրա աստուածաբանական Ամ-

1) Մատ. 5—22: 1 Յոհ. 3—10, 15. 1 Կոր. 13—1...3:

2) Այսինքն՝ դէպի անվերջ տարածութեան մէջ գտնված բոլոր անթիւ արևների, մոլորակների և դիտաւորների Ստեղծողն ունեցած հաւատը։ Դան. 11—38:

*րութիւնները,1) այն ժամանակ նրանք պէտք է տան նրան այս Գրքոյկը և ասեն. ահա, ահա գրքոյկ հերքում Այս Գրքոյկի միջի իւրաքանչիւր յոդվածի դէմ, և այն ժամանակ մենք,2) կը նայենք մեր բանակատութեամբ,3) ում կողմը կը լինի անհերքելի Նորկտակարանային-Իսրայէլական կամ համամարդկային ճշմարտութիւնը: Բայց առաջուց յայտարարում ենք,4) որ Մարմնաւոր Անմահութիւնը մենք չենք փոխանակի ոչնչով ողջ Անվերջ Տիեզերքում:*

*21.—Նրանք չը պէտք է մտնեն ոչ մի տեսակի զինուորական կամ Մարդասպանական ժողով, և նոյն իսկ չը զինուեն ոչ մի տեսակի զինուորական կամ աստվածային զէնքով. որովհետև Մարդասպանը չի ըստանայ անմահութիւն,5) և որ իւրաքանչիւր սուր վերցնող սրով էլ կը գնայ.6) իսկ գլխաւորը այն պատճառով, որ նրանք պէտք է լինեն որորված դէպի բոլոր Մարդիկ, և մինչև անգամ դէպ իրանց թշնամիները: Տես XII.*

*22.—Այն հարցին, «ինչ է Աստուածաբանական ճշմարտութիւնը,» պէտք է պատասխանէք այսպէս. «բոլորը, ինչ որ համամարդկային է և տանում է դէպի մարմնաւոր անմահութիւն, է Եհովայի ճշմարտութիւնը. իսկ բոլորը, որ համամարդկային չէ և տանում է դէպի մեռ միայն հոգու անմահութիւնը, է Սատանայի ճշմարտութիւնը:»*

*XXV. Նախազգուշացումն յանուն մարդասիրութեան.*

*Ով որ գտնելով կամ ստանալով Եհովայի այս աւետումը: ուրախալի՝ ոչ միայն նրա Իսրայէլի, այլ և բոլոր մարդկութեան համար, կը ոչնչացնի կամ կը*

1) Գ. Ե. 2—24: 13—8...11: 12—9: 18—23:
2) Կամ ես. եթէ մենակ եմ: 3) Հաւմ. 10—2.
4) Կամ յայտարարում եմ. 5) 1 Յովհ. 3—15:
6) Մատ. 26—52:



*թագցնի, կամ կը յանձնի Սատանային,1) նրա վրայ Եհովան կը թափի անէծք ողջ անվերջ Յաւիտեան, ինչպէս Իրան վատթար հակառակորդի վրայ. քան թէ Դաթանն ու Աբիրոնը: Աստծով Ճշմարիտ. Ամէն:*

*Ով որ կը կասկածի և կը մտածի, թէ „Սատանայից չէ՞ արդեօք այս Աւետումը:“2)*

*Նա թող դիմէ Այդ հարցով ոչ թէ քո ցանկապատի իմաստուն և սուրբ աստուածաբաններին, այլ Իրեն Աստծուն, ասելով Նրան.*

*Սուրբ մարգարէների3) Աստուած Եհովա,4)*

*Եթէ Սա Քո մշանջենական ճշմարտութիւնն է, յայտարարված այժմ-Քեզանով Քո այս Սքանչելի Առաքեալի միջոցով, հետևապէս բարեհաճիր ընդունել և Ինձ Քեզ և բոլոր Սատանայական կամ առանձին Կրօնների Աւերիչների համար Ջերմեռանդ և Անվեհեր5) մարտնչողների թւում,*

*Բայց եթէ որ սա Քեզանից չէ, այլ կորըստաբեր թակարդ է Սատանայական խորամանկութիւններից,6) կամ Սուտ-Քրիստոսից կամ Սուտ-Եհովականից, ուրեմն արա այնպէս, որ ես չը տեսնեմ7)*

1) Որպէսզի Սատանան տանջի Այս Աւետման տարածողներին:
2) Որովհետև կան և այնպիսի անմիտներ, օր. Պաշկովը, Գօտացկին և Գրնիգոորը, որոնք մտածում են որ իբր թէ Սատանան կարող է ոչնչացնել Ինքն Իրան: Մար. 3—23, 24:
3) Գ. Ե. 22—6: Ովս. 12—11: Եր. 7—25, 26: Ես. 38—5: 37—4: 4) Իսկ Քրիստոնեան կարող է ասել՝ Յիսուս Քրիստոս: 5) Գ. Ե. 21—8:
6) Գ. Ե. 2—24: 13—8, 11: 20—2...15. 7) Կամ չը տեսնեմ

և չը լսեմ այս Աւետումը և Կոչը դէպի Մարմնաւոր Անմահութիւն, և համարեմ Ճշմարիտ Կրօն մեն միայն մեր (այս ինչ) խռովարարը կամ առանձնակին, այլ ոչ թէ համամարդկային ողջախաղաղարարը, և որպէսզի ես կրկին նոյնպէս, չը հաւատամ Քո խօսքերին Գ. Ե. մէջ. որ իբր թէ միայն այն մարդն է Սբ. Մարգարէների եղբայրը և Քո Հրեշտակների բարեկամը. որը կատարում է Երկնից Գրքի Միջի Քո հրամանները։» Ամէն։

XXVI. Այս Համաշխարհային Աստուածային Լուսատուի Օրհնութիւնը՝ այս Գրքոյին ուղարկելիս Երկու ազգերի՝ Իսմայէլացիներին եւ Հայերին։

Եւ կը յայտարարվի ինչքան կարելի է շուտով, Եհովայի Այս չարտասանուած շնորհը Նոանով օրհնուած այն Իսմայէլացիներին, որոնք Նրա 1000-ամեայ Թագաւորութեան մէջ պէտք է կազմեն Նրա Նոր-կտակարանային Իսրայէլի 2-րդ մասը, որպէսզի նրանք, լսելով այսպիսի նախատահմանութիւնը նրանց համար Եհովայից, թողնեն իրանց բոլոր սատանայական ցանկապատերը1) և միանան շուտով Նրա այս Նոր-կտակարանային-Իսրայէլական Կրօնի մէջ, և դառնան նրա միջոցով իմ անկեղծ բարեկամներն ու բարեկամուհիները ողջ անվերջ յաւիտեան։ Ամէն։2)

1) Եւ խաղերը մեծ շերիֆների և փաթիշահների մէջ։

2) Ես. 19—24, 25։ 1 Մ. 17 20։ 25—16, 12։ 16—10, 11։



Եւ կը յայտ...1) Հայերին1) 3-րդ Մասը...1) ցանկապատերը...2) Ամէն։

XXVII. Լոյս բոլոր ազգերին եւ շաղկապող նրանց հետ Ցուդայեանների դէպի Եհովան մի հաւատի մէջ։



XXVIII. Սէլսուիա քեզ Լուսաստղ եւ Ամէն։3)

Ա Մ Է Ն.

№

Եթէ Աստուածային Այս համաշխարհային Աւետումը զետեղվի այն մարդու սրտում, որը գրած է Կենաց Գրքի մէջ,4) և հետևապէս անձնազոհութեամբ կը թողնի բոլոր Սատանայական Կրօնները և կը յարի Այս Եղբայրամարգարէական և Համախոհարեշտակային կամ համամարդկային Կրօնին,5) նա պէտք է6) մատուցանի Եհովային գոհաբանական զոհ7) և տալ Նրան

1) Նոյնը, ինչ որ և Իսմայէլացիներին։

2) Խաղերը Սատանայական Կաթողիկոսների մէջ, ազատանդաղարդ գլխարկներով, ասաղերով, խաչերով, զուարդաններով և սաղնաեփութեամբ դէպի արքայութիւն քշողներով։

3) Գ. Ե. 22—16։ 3—14։ 19—1, 3։

4) Գ. Ե. 13—8։ 20—15։ Սաղ. 68 (69)—29։

5) Գ. Ե. 22—9։ 14—12։ Ես. 56—7։ 2—2, 3։ Մաղ. 11—17։ Գ. Ե. 11—1, 2։

6) Կամ պէտք է (եթէ կին է)։

7) Դրամական, թէկուզ միայն 2 լումայ։ Ղուկ. 21—2։

երդմնական խոստում այն բանի համար, որ դու այժմ ոչ մի կերպ չես հրաժարի Նրանից և կը սկսես ճշտութեամբ կատարել Նրա այս Նոր Օրէնքը և Ջերմեռանդօրէն տարածել Նրա Այս կենսատու Աւետումը, թէև դրա համար տանջի Սատանան սարսափելի մարտիրոսական մահով։ 1)

Սրանից-իսկ յետոյ դու պէտք է 2) ամեն օր Ջերմեռանդօրէն աղօթես Եհովային այսպէս.

Ամենահաճելի Աստուած իմ Եհովա.

Ձէ՞ կարելի արդեօք և ինձ գիտենալ, ո՞վ է Քո այն ամենակարող հակառակորդը, որը, վերջին ժամանակ կը սկսի չը թոյլատրել Քեզ հաստատելու Քո Նոր-կտակարանային Իսրայէլական թագաւորութիւնը 1000 տարով, և վերջապէս կը գայ Արմագէդդոն թնդանօթների, հրացանների, սրերի և նիզակների մեծ բազմութեամբ, որպէսզի այն տեղ բռնի Քեզ, ոչնչացնի բոլոր Քեզ յարած մարդկանց։ 3)

Եւ այս հարցով դու պէտք է բաղխես Եհովայի գթասրտութեան դռները մինչ այն ժամանակ, երբ Նա կը բանայ և կը տայ քեզ պատասխան քո այս հարցին Մատ. 7—7, 8։ 17—20։ Մար. 11—23, 24։

Իմ պատասխանը Բարեծնունդ Լուսաւորված եւ բարեպաշտ իշխանութեան պահողներին.

Բարեծնունդ-Լուսաւորվածներ, իշխանութիւն պա-

1) Գ. Ե. 3—21։ 20—10։ 14—13։ 20—4։

2) Կամ պէտք է (եթէ կին է)։

3) Զաք. 14—2։ 7։ Եզ. 38 և 39։ Գ. Ե. 19—15։ 21։ 16։ 16։



հողներ, ակնջ դրէք հետևեալ խօսքերին.

Հաւաքել մարդկանց բոլոր կրօնքներից անվան մարդկանց ժողովի, և հրաւիրել բոլոր ազգերին և ցեղերին Իսրայէլի Աստծու, Եհովայի հաւատի Միութեան մէջ և համաշխարհային-եղբայրական Սիրոյ մէջ, կամ ոչնչացնելու ամեն տեսակ պատերազմների, արիւնահեղութիւնների և սարսափելիների ամբողջ Երկրային Մոլորակի վրայ. ոչ միայն ոչ մարդկային գոլ է, այլ մինչև անգամ և ոչ հրեշտակային, այլ Խաղաղութեան եւ Սիրոյ Իրեն Աստուած Եհովայի, Հետևապէս պարզ է, ինչպէս 5 մատերը ձեռքի վրայ, թէ ով որ կ'ապրստամբի, որպէսզի չը թողնի անելու այսպիսի Զարտասանված Բարեգործութիւն ամբողջ մարդկութեան համար, նա ապստամբում է ոչ թէ իմ, պակասամիտ մարդու, դէմ. այլ Ինքնին Եհովայի դէմ կամ Աստծու դէմ, որ չի ցանկանում մարդկանցից ոչ ոքի համար մահ։

Կարդացէք, ոչ թէ վայրենի, այլ բարեծնունդ լուսաւորված ուշադրութեամբ, այս Աստուածային Աւետումը, և դուք պարզապէս կը տեսնէք, որ Եհովան, (այլ ոչ թէ ես) յայտարարում է այն բոլոր թագաւորութիւնների և ազգերի մէջ (այլ ոչ թէ մեն միայն Ռուսաստանում) արդէն 25 տարուց աւելի և որ նրանք բոլորը, որոնք չը թողցին Նրան անելու այսպիսի բարեգործութիւն ամբողջ Մարդկութեան համար, պարտուած են յանկարծակի մահով և մինչև անգամ դինամիտային պայթիւնով։

Այս յիշեցնում եմ ես ձեզ, ոչ թէ Ձեզ Սարսափեցնելու համար, այլ իմ մարդասիրութեան պատճառով. իսկ իւրաքանչիւրը, որ ունի չարգելաբեստա-

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱԶՅԱՆ



յին հոգի, վարվիր քո ծրտի դրդմանը, այսինքն՝ լրացրու չափը քրիստոնէական չարագործութիւնների այն կոթածների, ողջ անվերջ յաւիտեան, Եռվայի հակառակորդների։

Ի միջի այլոց, եթէ դուք դրէք համոզիչ հիրքում այս Աստուածային Աւետման իւրաքանչիւր յոդուածի դէմ, և ինձ համար կը լինի այնպէս համոզիչ, ինչպէս 5 մատերը ձեռքի վրայ, որ այսպիսի Աստուածային բարեգործու Ցեանը երբէք վիճակված չէ իրականանալու երկրի վրայ, հետևապէս ես միայն այն ժամանակ կը դադարեմ խոնարհվել Եռվային, այլ կը սկսեմ լիովին խոնարհվել ձեզ և ձեզ հետ միասին կը փառաբանեմ բոլոր սատանայական, խռովարար ցանկապատերը Մարդկութեան մէջ և ցոյց տալ, որ 1015 Կրօնների իրաքանչիւրը ճշմարիտ է, կամ Աստծուց է, այլ ոչ թէ սատանայից։

Իսկ հիմա առայժմ, յայտնի լինի էլի մի անգամ և ընդ միշտ, որ Աստծու, իմ Խաչված Եռվայի, բարեհաճութեամբ, ես եմ Լոյս ողջոյ Ազգերի համար և շաղկապող Նրանց հետ Ցուդայականներին Մի Կրօնի մէջ դէպի Նա։ Եւ հետևապէս ես միայն գործիք եմ Նրա աջ ձեռքի մէջ ոչնչացնելու համար բոլոր Սատանայական խռովարար ցանկապատերը ամբողջ մարդկութեան մէջ։

ՀԱՅԿ. ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հայկական Պետական Գրադարան
7/XI 1922
ИМЕНИА. МЯСНИКЯНА
Մ. ԱՍԻ ԱՆՎԱՆ

7-ն Յունվարի 1887 թ. Միտավայում։

ՀՀ Ազգային գրադարան
NL0030354

3379

3 2 7 2